# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2026թ. թիվ 274-Ա

## Ս.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ Ա.ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի ապրիլի 13-ի թիվ 238-Ա որոշումը և հաշվի առնելով Ս.Սիմոնյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու Ա.Միկոյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու Ա.Միկոյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Սուսաննա Սիմոնի Սիմոնյանին՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու Ա.Միկոյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու Ա.Միկոյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի պարտականությունների իրականացման համար Սուսաննա Սիմոնյանին տալ լրավճար «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու Ա.Միկոյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 27-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Recoverable Signature

X

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-04-27 18:19:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

miD

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: MKRTCHYAN AREN 1204920311 Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. ապրիլի 27
ք.Վանաձոր